ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ԳԻՏՆԱԿԱՆԸ

(ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ազատ Համբարյանի
ծննդյան 75-ամյակի առթիվ)

Այսօրվա միջին և հատկապես երիտասարդ սերնդի պատմաբանների և հասարակագետների համար պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ազատ Համբարյանի կյանքն ու գիտական գործունեությունը հետաքրքրական և ուսանելի են շատ կողմերով: Համբարյանը օրինակ պետք է լինի առանձնապես նրանց համար, ովքեր լրիվ հաշիվ չեն տալիս այն մասին, թե խորհրդային ժամանակաշրջանը ինչպիսի նպաստավոր նախադրյալներ ու պայմաններ ստեղծեց գիտության և մշակույթի զարգացման համար: Այս առումով էլ վերին աստիճանի ուշագրավ են Ազատ Համբարյանի կյանքն ու գործը:

Ազատ Սերգեյի Համբարյանը ծնվել է 1926 թ. հունիսի 8-ին Վրացական ԽՍՀ (արդ՝ Վրաստանի Հանրապետություն) Բոդդանովկայի (արդ՝ Նինոծմինդա) շրջանի Սաթխա գյուղում, գյուղացու ընտանիքում: 1942 թվականին, դերազանց առաջադիմությամբ, ավարտում է հայրենի Սաթխայի միջնակարգ դպրոցը և աշխատում նույն գյուղի դպրոցում որպես ուսուցիչ: 1948 թ. ավարտում է Լենինականի պետական մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը՝ գերազանցության դիպլոմով: Այնուհետև աշխատում նույն ինստիտուտում որպես պատմության կաբինետի վարիչ: Ա. Համբարյանը 1953 թ. ավարտում է ԽՍՀՄ ԳԱ պատմության ինստիտուտի Լենինգրադի բաժանմունքի ասպիրանտուրան, նույն թվականին պաշտպանում թեկնածուական դիսերտացիա և ստանում պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Ա. Համբարյանը 1953 թվականից առ այսօր աշխատում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում: Պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան է ստացել՝ 1966 թվականին, իսկ պրոֆեսորի կոչում՝ 1976-ին: Համբարյանը 1980 թվականից պատմության ինստիտուտի նոր պատմության բաժնի վարիչն է: 1977–1983 թթ. եղել է Հայկական սովե-

տական հանրագիտարանի հայ ժողովրդի նոր և նորագույն պատմության գիտաճյուղային խորհրդի անդամ: Շուրջ կես դար հայ ժողովրդի նոր պատմության հիմնահարցերով զբաղվող գիտնականի, նրա հեղինակած գրքերի մասին տպագրվել են տասնյակ հոդվածներ, գրախոսականներ, որոնցում տրված է Համբարյան հետազոտողի անանց վաստակի գնահատականը:

Ա. Համբարյանի վաստակին տրված ծանրակշիռ գնահատականներում ընդգծվում է, որ տակավին 1959 թ. լույս տեսած «Կապիտալիստական հարաբերությունների զարգացումը հայկական գյուղում (1860–1920)» (ռուսերեն) հիմնարար աշխատության մեջ, հեղինակը բազմաբնույթ արխիվային նյութերի և գրականության ուսումնասիրության հենքի վրա ներկայացրել է երկրի գյուղատնտեսության բոլոր ճյուղերի ներգրավումը ապրանքադրամական հարաբերությունների մեջ և դրանց զարգացման ելևէջները պատմական տարբեր ժամանակահատվածներում: Արխիվային խոսուն փաստերի ներգրավմամբ Համբարյանն ընթերցողին տեսանելի է դարձրել ոչ միայն գյուղացիության սոցիալական շերտավորումը, այլև արտագնացության աճը դեպի Անդրկովկասի արդյունաբերական կենտրոնները, Ռուսաստանի հարավ և այլ շրջաններ: Հատուկ ուշադրություն է դարձված այն դերին, որ խաղացել է ռուսական կապիտալիզմը Արևելյան Հայաստանում բուրժուական կացութաձևի առաջացման ու զարգացման գործում: Սոցիալ-տնտեսական և քաղաքական գործոնների համալիր վերլուծմամբ Համբարյանը հիմնավորել և լուսաբանել է տեղական առանձնահատկությունների կնիքը կրող XIX դարի 2-րդ կեսի և XX դարի սկզբի արևելահայության մեջ ծնունդ առած գյուղացիական շարժումները: 1950-ական թվականների վերջերից, երբ արևմտահայ ժողովրդի պատմությամբ զբաղվելու իրավունքն արդեն դուրս էր եկել «արգելված գոտու» շրջանակներից, Համբարյանը ձեռնամուխ եղավ Արևմտյան Հայաստանի XIX դարի 2-րդ կեսի և XX դարի սկզբի հողային հարաբերությունների ուսումնասիրությանը և հրապարակեց «Ագրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում (1856–1914)» գիրքը, ուր գիտական բարեխղճությամբ բացահայտված է թուրքական ֆեոդալիզմի առանձնահատկությունը տվյալ պատմաշրջանում, երբ բռնակալության հայահալած քաղաքականության հետևանքով ֆեոդալների դասակարգը բաղկացած էր հիմնականում մահմեդականներից՝ թուրքերից և քրդերից, իսկ գյուղացիները՝ գլխավորապես քրիստոնյա հայերից: Ագրարային հարաբերությունների բոլոր հատկանիշների ընդգրկմամբ՝ գիտնականի այս աշխատությունը արևմտահայ գյուղացիության կյանքի յուրահատուկ հանրագիտարան է:

Ա. Համբարյանը 1983 թ. ընթերցողի սեղանին դրեց մի ուշագրավ մենագրություն ևս՝ «Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների համառոտ պատմություն (XIX դ. երկրորդ կես – XX դ. սկիզբ)» գիրքը, որտեղ տրված է Հայաստանի արևելյան և արևմտյան հատվածների հողային հարաբերությունների և կապիտալիզմի զարգացման բնութագրումը, վեր են հանված նրանց միջև եղած ընդհանրություններն ու տարբերությունները: Գիտնականը հարուստ փաստերի վերլուծությամբ ակնբախ է դարձնում, որ Հայաստանի երկու հատվածները իրենց տնտեսական զար-

գացման տեմպերով և մակարդակով էապես տարբերվում էին. եթե Արևմտյան Հայաստանում շարունակում էր բացակայել անձի ու գույքի ապահովությունը, տիրում էր հարկային կողոպուտը և պարբերաբար կրկնվող թալանն ու մահմեդական հորդաների խժդժությունները սովորական երևույթներ էին, ապա Արևելյան Հայաստանում հայերի անձն ու գույքը, խաղաղ աշխատանքն ապահովված էին:

«Երիտթուրքերի ազգային ու հողային քաղաքականությունը և ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում (1908–1914)» աշխատության մեջ Ա. Համբարյանը արխիվային և այլ նյութերի համակողմանի ընդգրկմամբ ներկայացրել է հայ ժողովրդի նկատմամբ երիտթուրքերի գործադրած քաղաքականության մեխանիզմի բոլոր բաղադրամասերը և անարգանքի սյունին գամել այդ քաղաքականության ամբողջ մարդատյացությունը, քաղաքականություն, որի անմիջական արդյունքը աննախադեպ արտագաղթն էր:

Հատուկ ուշադրության է արժանի Ա. Համբարյանի կողմից արևմտահայության ազատագրության ուղիների հանդեպ հայ հասարակական-քաղաքական հոսանքների և ազգային-քաղաքական կուսակցությունների վերաբերմունքի հիմնահարցի ուսումնասիրությունը: Այդ ուղղությամբ հեղինակի կատարած տևական հետազոտության արդյունքը եղավ 1990 թ. հրատարակված «Հայ հասարակական-քաղաքական միտքը արևմտահայության ազատագրության ուղիների մասին (XIX դարի վերջ – XX դ. սկիզբ)» ծավալուն մենագրությունը, ուր գիտական պատմականության նորարարությամբ փաստարկված հետևությունները, եզրահանգումներն ու բանաձևումներն ունեն ոչ միայն գաղափարատեսական, այլև գործնական նշանակություն: Այս ուսումնասիրության մեջ ոչ միայն ընդհանրացված են պատմագրության մեջ եղած տեսակետները արևմտահայության ազատագրության մասին, այլև խտացված ներկայացված են հայ ազատագրական մտքի ելևէջները պատմական տարբեր ժամանակահատվածներում, 1878–1917 թվականներին, մասնավորապես 1908 թ. հետո: Հեղինակի այս աշխատությունը որպես ձեռնարկ օգտագործվում է հանրապետության բուհերում:

Ներկա հոդվածի շրջանակները թույլ չեն տալիս շատ գրել գիտնականի բոլոր աշխատությունների, մի քանի տասնյակ հոդվածների մասին, հոդվածներ, որոնցում բացահայտված են հայ ժողովրդի նոր պատմության ցարդ չուսումնասիրված կամ քիչ ուսումնասիրված հանգուցային հիմնահարցեր՝ դեմոգրաֆիա, սոցիալական տերմինաբանություն, հայ-քրդական հարաբերություններ և այլն:

Ա. Համբարյանը, գիտահետազոտական աշխատանքներին զուգընթաց, զբաղվել է նաև գիտակազմակերպչական աշխատանքներով: Նրա ղեկավարությամբ նոր պատմության բաժնի աշխատակիցները իրականացրել են մի շարք հետազոտություններ, որոնցում լուսաբանվել են պատմագիտական կարևորության մի շարք հիմնահարցեր: Դրվատելի է Համբարյանի աշխատանքը հայ ժողովրդի պատմության բազմահատորյակի 6-րդ հատորի և «Հայոց պատմություն» դպրոցական դասագրքի ստեղծման գործում:

Ա. Համբարյանը հանդես է եկել գիտական բազում զեկուցումներով և հաղորդումներով նվիրված Ռուսաստանի և Անդրկովկասի հողային հարաբերությունների, կապիտալիզմի գենեզիսի, բուրժուազիայի և պրոլետարիատի ձևավորման, դեմոգրաֆիայի և այլ խնդիրների, ոչ միայն Հանրապետության, այլև նախկին ԽՍՀՄ հանրապետությունների շատ մայրաքաղաքներում, Մոսկվայում ու Լենինգրադում: Նրա ասպիրանտներից շատերը պաշտպանել են դոկտորական և թեկնածուական դիսերտացիաներ: Համբարյանը տարիներ շարունակ Ռուսաստանի և հայոց պատմության դասախոսություններ է կարդացել հանրապետության առաջատար բուհերում: Ա. Համբարյանը ոչ միայն հայտնի պատմաբան է, այլև որպես մարդ-քաղաքացի վայելում է իր ընկերների սերն ու հարգանքը: Ուստի նրանք 75-ամյա իրենց ընկերոջը ցանկանում են առողջություն և ստեղծագործական նոր հաջողություններ:

ՆՈՐԱՅՐ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ